ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

OPEN SOCIETY FOUNDATIONS

# ԶԵԿՈՒՅՑ

## 2014 թ. ձմեռային եւ 2015 թ. ամառային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի մասին

ՎԱՆԱՁՈՐ

2015

Հեղինակային խումբ՝

*Արթուր Սաքունց*

*Արմինե Սադիկյան*

*Նազելի Մովսեսյան*

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

# Ներածություն

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացվում են 2014 թ-ի ձմեռային (2014 թ. դեկտեմբեր - 2015 թ-ի հունվար-փետրվար) եւ 2015 թ-ի ամառային (մայիս-հուլիս ամիսներ) զորակոչերի վերաբերյալ տվյալները, այդ ժամանակահատվածում արձանագրված մարդու իրավունքների խախտումները, օրենսդրական բացերը, օրենսդրության կիրառման խնդիրները:

Զեկույցում ամփոփված տեղեկությունները ստացվել են ՀՀ տարբեր մարզերի բնակավայրերի, մասնավորապես Լոռու, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի եւ Երեւան քաղաքի կազմակերպություն դիմած 45 քաղաքացիներից՝ զորակոչիկներից եւ նրանց հարազատներից, ինչպես նաեւ ՀՀ պաշտպանության նախարարությունից կազմակերպության հարցումների պատասխանների միջոցով:

Զեկույցում ներկայացրել ենք մինչ այժմ բազմիցս բարձրաձայնված եւ մասամբ լուծված կամ լուծում չստացած համակարգային խնդիրները եւ զորակոչիկների իրավունքների խախտմանը հանգեցնող կոնկրետ խնդիրների մասին տեղեկատվությունը:

Անդրադարձել ենք նաեւ զորակոչը եւ զինվորական ծառայության պիտանիության հարցը կարգավորող օրենսդրությանը եւ գնահատել ենք թերությունների, բացերի ազդեցությունը զորակոչիկների իրավունքների խախտման տեսանկյունից:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

# 1. Կիրառված մեթոդոլոգիան

Զեկույցում ներկայացված տեղեկատվության աղբյուրներն են.

1. զորակոչիկները եւ նրանց հարազատների հաղորդած տվյալները
2. զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը
3. ՀՀ պաշտպանական գերատեսչության կողմից ստացված գրությունները
4. զանգվածային լրատվության միջոցներով տարածված տվյալները:

Կազմակերպություն դիմած զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերն ուսումնասիրվել են բժիշկ-փորձագետի կողմից, որի եզրակացության հիման վրա կազմվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը հասցեագրվող գրությունները: Համեմատվել են առողջության վերաբերյալ բժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկի առողջության վերաբերյալ տրամադրված եզրակացությունները քաղաքացիական բժշկական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերի եւ ծնողների կողմից հաղորդված տվյալների հետ:

Զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ տվյալները դիտարկվել են ըստ 2013 թվականի հունիսի 11-ի ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 Հրամանով սահմանված հիվանդությունների ցանկի եւ գնահատվել է զինծառայությանը զորակոչիկի պիտանիությունը՝ համաձայն Հրամանով սահմանված կարգում ամրագրված չափանիշների:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

## 2. Զորակոչի գործընթացը, նախազորակոչային տարիքի անձանց եւ զորակոչիկների առողջական վիճակի զննությունը կարգավորող օրենսդրությունը եւ իրավական դաշտի թերությունները զինծառայությանը պիտանիության հարցի կարգավորման շրջանակում

Զորակոչի գործընթացը եւ զորակոչիկների բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը ամրագրված են հետեւյալ իրավական ակտերում:

- **«Զինապարտության մասին» ՀՀ օրենք.**[1] ընդունվել է 1996 թ. սեպտեմբերի 16-ին: Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, պարտադիր զինվորական ծառայության զորակոչը, զինվորական ծառայությունը, պահեստազորում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է բժշկական զննության անցկացումը կարգավորող նորմերը, պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ազատման եւ տարկետում ստանալու հիմքերը:

  Հարկ է նշել, որ 2014 թ-ին մշակվել եւ նույն թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ կառավարությանն է ներկայացվել «Զինապարտության եւ զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ապահովում է ՀՀ սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու ՀՀ քաղաքացիների պարտավորությունը: Նախագիծը դեռեւս հաստատված չէ կառավարության կողմից:
- **«Պաշտպանության մասին» ՀՀ օրենք.**[2] ընդունվել է 2008 թ. նոյեմբերի 27-ին: Համաձայն սույն օրենքի 13-րդ հոդվածի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հաստատում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի եւ վարժական հավաքների անցկացման, զինապարտների

[1] http://www.arlis.am/
[2] Տե՛ս նույն աղբյուրը



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը: Համաձայն օրենքի 14-րդ հոդվածի՝ զինված ուժերի գլխավոր շտաբն իրականացնում է պարտադիր զինվորական ծառայության, զորակոչի և վարժական հավաքների անցկացումը, ինչպես նաև զորահավաքային ռեսուրսների հաշվառումը և հավաքագրումը, իրականացնում է քաղաքացիների զինվորական ծառայության նախապատրաստությունը և զինվորական հաշվառումը:

- 2013 թվականի հունիսի 11-ի **ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանը** զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և ՀՀ ՊՆ 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին /այսուհետ՝ ՀՀ ՊՆ 410 հրաման/:

ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանվում են.

- քաղաքացիների բժշկական փորձաքննության անցկացման կարգը՝ նրանց զորակոչային տեղամասերին կցագրելու եվ պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու ժամանակ,
- հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների ցանկը, որոնց հիման վրա որոշվում է կցագրման, զորակոչի, զինվորական ծառայության անցնելու, վարժական հավաքների, հրամանատարային կամ շտաբային զինվորական վարժանքների և զորավարժությունների (զորախաղերի) ժամանակ քաղաքացիների պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ ըստ նրանց առողջական վիճակի և ֆիզիկական տվյալների:

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության՝ ՀՀ առողջապահության նախարարի առաջարկության հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ 2014 թ-ին նախատեսվել է լրամշակել ՀՀ ՊՆ 410 հրամանով հաստատված զինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը, որի համար ստեղծվել է աշխատանքային խումբ:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Ինչպես բազմիցս անդրադարձել ենք նախորդ զեկույցներում[3], մինչ 2014 թ-ը որեւէ իրավական ակտով, ինչպես նախկին հրամաններով, այնպես էլ վերջին՝ ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանով, սահմանված չէր շարային, ոչ շարային (որը վերջին հրամանով այլեւս կիրառելի չէ) և սահմանափակումներով զինվորական ծառայության շրջանակը, զինծառայության ծավալը: Իսկ շարային եւ «ոչ շարային» ծառայությունը կարգավորող նորմատիվ ակտի գոյության վերաբերյալ մեր հարցումներին ՀՀ ՊՆ-ն նախկինում տրամադրել էր իրարամերժ պատասխաններ:[4]

Կազմակերպության կողմից ՀՀ ՊՆ հասցեագրված գրությանն ի պատասխան 2014 թ-ի նոյեմբերի 25-ի գրությամբ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետը հայտնել է, որ ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանով գործողության դրված «Զինապարտների բժշկական եւ զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգի» համաձայն՝ զինծառայությանը պիտանիության հոդվածներով ՀՀ ԶՈՒ ժամկետային պարտադիր զինծառայողներին հաստիքների նշանակման հակացուցումները որոշելու, ՀՀ ԶՈՒ զինծառայողներին բուժական ֆիզկուլտուրային խմբերում ընդգրկելու եւ թույլատրվող վարժությունների ցանկը սահմանելու նպատակով ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 2014 թ. հունվարի 15-ի գաղտնի հրամանով գործողության է դրվել ձեռնարկ, որով հաստատվել են զինվորական ծառայության սահմանափակումների բնութագիրը, թույլատրվող ֆիզիկական վարժությունների ցանկը, ինչպես նաեւ զինծառայողներին պաշտոնների նշանակման սահմանափակումները: Գրության մեջ նշվում է, որ ձեռնարկը մշակվել է ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական, մարտական պատրաստության, ԶՈՒ ԳՇ կազմզորահավաքային վարչությունների մասնագետների եւ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի փորձագետների կողմից: Ըստ գրության մեջ ներկայացված տեղեկատվության՝ ձեռնարկում սահմանված են նաեւ խաղաղ պայմաններում զինվորական ծառայությանը պիտանիության

[3] http://hcav.am/wp-content/uploads/2014/11/%D5%A6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9_2013-2014_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

[4] ԶԵԿՈՒՅՑ 2013 թ. գարնանային զորակոչի ընթացքում զորակոչի գործընթացի եւ զորակոչիկների իրավունքների վիճակի մասին, էջ 4-5, ՀԱՎԵԼՎԱԾ 1.1-1.5



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

սահմանափակումներով ժամկետային զինծառայողներին մարտական հերթափոխությունում ընդգրկման կարգը, բարձր լեռնային կլիմայական գոտիներում ծառայության հակացուցումները, ինչպես նաեւ ֆիզիկական պատրաստության սահմանափակումները՝ համաձայն «Զինապարտների եւ զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգի»:

Այսպիսով, շարային եւ սահմանափակումներով զինծառայությունը կարգավորող, ինչպես նաեւ թույլատրելի գործողություններ իրականացնելու ցանկը սահմանելու գաղտնի հրամանը, որով սահմանվում են սահմանափակումներով ծառայության զինծառայողների իրավունքները, մատչելի չէ զորակոչիկներին եւ նրանց հարազատներին: Այս հարցի կարգավորումը մշտապես կարեւորվում է կազմակերպության կողմից, քանի որ ինչպես վկայում են քաղաքացիները, որոնք ճանաչվել են «շարային՝ սահմանափակումներով» ծառայությանը, իրականում գտնվել եւ գտնվում են շարային ծառայության մեջ՝ ներառյալ մարտական հերթապահությունում ընդգրկվելը, որը հանգեցնում է ոչ միայն նրանց առողջական վիճակի վատթարացմանը, այլեւ զինվորական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը, կանոնադրային հարաբերությունների խախտմանը, իսկ առանձին դեպքերում նույնիսկ զինծառայողի մահվանը:

ՀՀ ՊՆ 410-հրամանով հստակ սահմանված չեն նաեւ մի շարք հիվանդությունների ծանրության աստիճանների չափանիշները, ինչի հետեւանքով նույն ծանրությամբ հիվանդությունը կարող է դիտարկվել որպես թե՛ ծառայությունից ազատման, թե՛ ծառայությանը պիտանի ճանաչելու հիմք: Այս մասին բազմիցս բարձրաձայնվել է, քանի որ գտնում ենք, որ իրավական նորմերի նման անհստակությունը հանդիսանում է իրավական որոշակիության սկզբունքի խախտում եւ կարող է հանդիսանալ եւ հանդիսանում է սուբյեկտիվ, հայեցողական մոտեցումների եւ կոռուպցիոն ռիսկերի դրսեւորումների պատճառ:

Այսպիսով, ՀՀ ՊՆ 410 հրամանը բովանդակային առումով իրականում հանգեցնում է զորակոչիկների իրավունքների խախտմանը եւ զինվորական



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ծառայությանը նրանց պիտանիության վերաբերյալ որոշումների ընտրողական ընդունմանը:

ՀՀ ՊՆ 410 հրամանով սահմանված չէ մի քանի հիվանդությունների առկայության պայմաններում զինվորական ծառայությանը պիտանիության հարցը, չնայած կազմակերպության կողմից պարբերաբար բարձրաձայնվել են կարգավորման բացակայության հետեւանքների մասին եւ բերվել են կոնկրետ զորակոչիկների իրավունքների խախտման օրինակներ: Այս առումով ՀՀ պաշտպանության նախարարությունը պատճառաբանում է. «մի քանի հոդվածով սահմանափակում ունեցող զորակոչիկի պիտանիության աստիճանը հնարավոր չէ համակցել եւ տալ մեկ ընդհանուր եզրակացություն, քանի որ յուրաքանչյուր հիվանդություն տալիս է որոշակի սահմանափակում ծառայողական պարտականությունները կատարելիս, որն իրականացվում է զորամասի հրամանատարության եւ բուժծառայության պետի հսկողությամբ:[5]

[5] http://hcav.am/wp-content/uploads/2014/10/M_2014-04.06_202-1.pdf



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

## 3. 2014 թ-ի ձմեռային եւ 2015 թ. ամառային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի և կազմակերպության կողմից արձանագրած խնդիրների մասին

Մինչ նշված զորակոչերի վերաբերյալ տեղեկությունների ամփոփումը, հարկ է նշել, որ ՀՀ նախագահի 2013 թ. նոյեմբերի 6-ի ՆՀ-283-Ն հրամանագրի[6] համաձայն 2013 թից սկսած աշնանային զորակոչը փոխարինվեց ձմեռայինի, ինչը պայմանավորված էր հանրակրթական դպրոցներում 12-ամյա կրթական համակարգի անցնելու հետ:

2014-2015 թթ. նախազորակոչային եւ զորակոչային ժամանակահատվածում շարունակվել են դժգոհությունները եւ բողոքները զորակոչիկների եւ նրանց հարազատների կողմից: Ինչպես եւ նախորդ զորակոչերի ընթացքում, վերջին զորակոչերի ընթացքում եւս արձանագրվել են մտահոգություններ ոչ պատշաճ բժշկական զննության իրականացման վերաբերյալ՝ զորակոչիկների մոտ առկա հիվանդությունների, այդ թվում՝ միաժամանակ մի քանի հիվանդությունների զուգակցման հետ կապված (որոնց վերաբերյալ ՀՀ պաշտպանական գերատեսչության հիմնավորումը ներկայացված է վերոշարադրյալում), եւ առանց առողջական խնդիրների պատշաճ լուծման զինված ուժեր զորակոչելու հետ կապված:

2014 թ-ի ձմեռային եւ 2015 թ-ի ամառային զորակոչերի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմել է 45 հոգի՝ համապատասխանաբար 26 եւ 19 հոգի: Նշված անձանցից 35-ի խնդիրը կապված է եղել ոչ պատշաճ բժշկական զննության իրականացման եւ առողջական վիճակի վերաբերյալ արդյունքների հետ համաձայն չլինելու հետ: Նշվածներից մեկական հոգին դիմել է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարկետման հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն եւ պարզաբանումներ ստանալու համար, զորակոչի օրինականության բողոքարկման ընթացակարգերի պարզաբանման,

[6] http://www.arlis.am/



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ԿԲՀ որոշման և դրա՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի հետ համապատասխանության հարցի պարզաբանման, վերափորձաքննության ենթարկվելու իրավական հիմքերի պարզաբանման, «Սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորումների պարզաբանման, 2 հոգին՝ այլ երկրում զինծառայություն անցած լինելով, ՀՀ-ում զինծառայություն անցնելու պարտավորության պարզաբանման համար, 2 հոգին՝ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից օգտվելու իրավական կարգավորումների պարզաբանման, 1 հոգի կրթական հարցերով (տե՛ս աղյուսակ 1):

Կազմակերպություն դիմած 45 անձանցից 29-ին տրամադրվել է բանավոր խորհրդատվություն, իսկ 16-ին, բացի բանավոր խորհրդատվություն տրամադրելուց, ցուցաբերվել է հետագա իրավական աջակցություն: 45 անձանցից 3-ը դիմել է եւ՛ ձմեռային, եւ՛ ամառային զորակոչերի ընթացքում:

Աղյուսակ 1.

| Խնդիրը | Ընդամենը |
|---|---|
| Առողջական | 35 |
| Այլ երկրում զինծառայություն անցած լինելով, ՀՀ-ում զինծառայություն անցնելու պարտավորության պարզաբանում | 2 |
| Բնակության վայրին մոտ ծառայելու հարցի իրավական կարգավորումների պարզաբանում | 2 |
| «Սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի պարզաբանում | 1 |
| Զորակոչի օրինականության բողոքարկման ընթացակարգերի պարզաբանում | 1 |
| ԿԲՀ որոշման և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համապատասխանության պարզաբանում | 1 |
| Կրթական | 1 |
| Կրկնակի փորձաքննության ենթարկվելու իրավական հիմքերի պարզաբանում | 1 |
| «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարկատման հիմքերի պարզաբանում | 1 |
| **Ընդամենը** | **45** |



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Բանավոր խորհրդատվության եւ հետագա իրավական աջակցության արդյունքում 45 հոգուց.

- 5 հոգու վերաբերյալ կայացվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման որոշում
- 12 հոգու վերաբերյալ կայացվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման որոշում, որից 2 հոգու՝ 5 ամսով (1-ը 2014 թ. ձմեռային զորակոչին, 1-ը՝ 2015 թ. ամառային), 3 հոգու՝ 6 ամսով (2-ը 2014 թ. ձմեռային զորակոչին, 1-ը՝ 2015 թ. ամառային), 2 հոգու՝ 10 ամսով 1-ը 2014 թ. ձմեռային զորակոչին, 1-ը՝ 2015 թ. ամառային), 5 հոգու՝ 3 տարով (1-ը 2014 թ. ձմեռային զորակոչին, 4-ը՝ 2015 թ. ամառային):
- 7 հոգի Ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով և զորակոչվել զինծառայության՝ չնայած այն հանգամանքին, որ նրանց առողջական վիճակի հետազոտման ակտերի մեջ առկա են եղել առողջական խնդիրների մասին հավաստումներ եւ թերություններ, որոնք այնուամենայնիվ, չեն վերացվել բժշկական հանձնաժողովների կողմից վերափորձաքննությունների արդյունքում /2 հոգի/ կամ ընդհանրապես չի նշանակվել վերափորձաքննություն /4 հոգի/:
- 5 հոգի, չնայած պիտանիության վերաբերյալ զորակոչային հանձնաժողովների եւ բժշկական հանձնաժողովի դրական որոշմանը, չեն ներկայացել զորակոչման համար, որոնց նկատմամբ հարուցվել է քրեական գործ եւ որի շրջանակներում կուսումնասիրվի նաեւ զորակոչիկների պիտանիության հարցի վերաբերյալ բժշկական զննության հիմնավորումները:
- 4 հոգու գործին ընթացք չի տրվել քաղաքացու ցանկությամբ՝ կամ բժշկական փաստաթղթերը ձեռք չբերելու կամ հետագա ընթացքի հետ կապված մտավախություններ ունենալու պատճառով:
- 1 հոգի դեռեւս առողջական խնդիրներով հանդերձ չի զորակոչվել, նրա նկատմամբ այլ քրեական գործ հարուցված լինելու պատճառով:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

- 1 հոգի, որն ունի առողջական խնդիրներ, պետք է զորակոչվի հաջորդ հերթական զորակոչի ընթացքում, քանի որ զորակոչային տարիքը դեռ չի լրացել:

Բոլոր անձանց հարցերով, որոնք հետամուտ են եղել իրենց իրավունքների պաշտպանությանը, պատրաստվել են գրություններ կամ տեղեկատվության հարցումներ: 2 զորակոչերի ընթացքում պատրաստվել է 20 գրություն (12 գրություն 2014 թ-ի ձմեռային զորակոչի եւ 10 գրություն 2015 թ-ի ամառային զորակոչի ընթացքում): Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, 20 գրությունից 17-ը հասցեագրված է ՀՀ ՊՆ, մեկական՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ոստիկանության Կումայրիի բաժին, ՀՀ ՔԿ Շիրակի մարզի քննչական վարչություն: ՀՀ ՊՆ հասցեագրված 17 գրությունից 3-ին տրամադրվել է հիմնավորված պատասխան «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետներում, 7-ին ստացվել է լիարժեք (ըստ էության պատասխան՝ օրենքով սահմանված ժամկետներում), 3-ին՝ ժամանակին, սակայն ոչ ըստ էության պատասխան, 2-ին՝ ժամանակին, սակայն ոչ ամբողջական, թերի պատասխան, 2 գրություն, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին, սակայն չեն բավարարել պահանջը՝ հիմնավորելով պատճառը, 1 գրություն ստացվել է ուշացումով, սակայն տրվել է ըստ էության պատասխան:

Մյուս 3 գերատեսչություններին հասցեագրված գրությունների պատասխանները ստացվել են ժամանակին եւ եղել են ըստ էության եւ լիարժեք:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Աղյուսակ 2.

| Գերատեսչությունը/ Պատասխան գրության ժամկետը | ՀՀ ՊՆ | ՀՀ Առողջապահության նախարարություն | ՀՀ ոստիկանության Կումայրիի բաժին (Շիրակի մարզի, ք. Գյումրի) | ՀՀ ՔԿ Շիրակի մարզի քննչական վարչություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Ժամանակին հիմնավորված պատասխան հղումով | 1 | 1 | 1 | | **3** |
| Ժամանակին Լիարժեք/ըստ էության պատասխան | 7 | | | 1 | **8** |
| Ժամանակին Ոչ ըստ էության պատասխան | 3 | | | | **3** |
| Ժամանակին թերի պատասխան | 2 | | | | **2** |
| Ժամանակին, հիմնավորված պատճառաբանությամբ չկատարելով նշված պահանջը | 3 | | | | **3** |
| Ուշացած[7] լիարժեք պատասխան | 1 | | | | **1** |
| **Ընդամենը** | **17** | **1** | **1** | **1** | **20** |

Զորակոչիկների եւ նրանց ծնողների մտահոգությունները կարելի է ամփոփել ըստ հետևյալ խնդիրների.

1. Բուժման նպատակով տարկետում ստանալու ժամանակահատվածում իրականում բուժում չի կատարվում կամ այն կրում է ձեւական բնույթ, իսկ արդեն հաջորդ հերթական զորակոչին ճանաչվում են պիտանի, չնայած նրանց առողջական վիճակի փոփոխություն տեղի չի ունեցել:
2. Հիվանդության հաստատման կամ ժխտման համար չի իրականացվում անհրաժեշտ լրացուցիչ հետազոտություն, որն անհրաժեշտ է պիտանիության հարցի որոշման համար:
3. Պիտանիության հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է՝ հաշվի չառնելով զորակոչիկների գանգատները եւ առողջական խնդիրները, որն

[7] Գրության պատասխանը տրամադրվել է մոտ 1 շաբաթ ուշացումով



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ըստ էության, հանդիսանում է առողջական վիճակը վատթարացնող ակտ:

4. Բժշկական փաստաթղթերում առկա են մի շարք հակասական ախտորոշումներ, որոնցից գերադասվում է զինվորական ծառայությանը պիտանի համարվելու համար հիմնավորող ախտորոշումը:
5. Որոշված չէ հիվանդության ֆունկցիայի խանգարման[8] աստիճանը:
6. Կիրառվում է բժշկական փորձաքննության արդյունքներով բացահայտված առողջական խնդիրներին չհամապատասխանող ՊՆ 410 հրամանի այնպիսի կետ, որով զորակոչիկը ճանաչվում է զինվորական ծառայությանը պիտանի, որը վերստին հանդիսանում է վիճակը վատթարացնող իրավական ակտ:
7. Կիրառվում է զորակոչիկի առողջական վիճակին չհամապատասխանող ՀՀ ՊՆ 410 հրամանի կետ
8. նախկինում մեկ կամ մի քանի անգամ տարկետում ստացած անձանց զորակոչում են զինծառայության՝ առանց առողջական վիճակի որեւէ փոփոխության, այն դեպքում, երբ նրանց տարկետում է տրամադրվել նախկինում նույն ախտորոշման հիմքով
9. առողջական վիճակի հետազոտության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում զորակոչիկը, փաստորեն, հնարավորություն չի ունենում բողոքարկել, քանի որ չի դադարեցվում նրա զորակոչը մինչ հարցի վերջնական լուծումը:
10. բժշկական հետազոտություն անցնելու համար զորակոչիկներին տրամադրվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման չափը

[8] ՀՀ ՊՆ 2013 թվ. թիվ 410-Ն հրամանում զինակոչիկների եւ զինծառայողների պիտանելիությունը որոշվում է ըստ հիվանդության հետեւանքով առաջացած օրգան-համակարգերի ֆունկցիաների խանգարծան ծանրության աստիճանի: Ըստ այդմ, հիվանդության ծանրության աստիճաններն են՝ 1. ֆունկցիայի աննշան խանգարմամբ կամ առանց ֆունկցիայի խանգարման՝ պիտանի է զինվորական ծառայությանը, 2. ֆունկցիայի չափավոր խանգարմամբ՝ պիտանի է սահմանափակումով, 3. ֆունկցիայի ծանր/արտահայտված խանգարման՝ պիտանի չէ զինվորական ծառայությանը կամ տարկետում է տրվում: Ֆունկցիայի խանգարման աստիճանների նման դասակարգման մեջ առկա է սուբյեկտիվություն, քանի որ ֆունկցիայի խանգարման ծանրությունը կարգավորված չէ ՊՆ հրամանով եւ ծանրության աստիճանը բազմաթիվ դեպքերում որոշում է բժշկական փորձքննության հանձնաժողովը:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

շարունակվում է մնալ անբավարար, որի պատճառով, շատ դեպքերում, զորակոչիկները չեն ներկայանում եւ անցնում հանրապետական բուժզննություն:

11. շարունակվում է տարբեր պատճառաբանություններով զորակոչիկներին չտրամադրվել «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանված[9] իրենց առողջական վիճակի մասին տեղեկությունը՝ չնայած ՊՆ հավաստիացումներին:
12. Առանձին մտահոգության խնդիր է հանդիսանում պաշտպանական գերատեսչության կողմից առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ժամկետների անորոշությունը: Ի դեպ, «Զինապարտության եւ զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի 34-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին նաեւ նրա առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը տրամադրումը:

[9] Հոդված 7՝ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

## 4. Առաջարկություններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներքոնշյալ առաջարկները, որոնք հիմնված են կոնկրետ փաստերի եւ անձանց հետ կապված դեպքերի վրա, բազմիցս ներկայացվել են պաշտպանական գերատեսչությանը: Վերստին ներկայացվում են հետեւյալ առաջարկությունները.

1. Ըստ առողջական խնդիրների զինվորական ծառայությանը զորակոչիկների պիտանիության կարգը սահմանել օրենքով (չնայած ՀՀ պաշտպանության նախարարությունը[10], անդրադառնալով այս հարցին, գտնում է, որ հրամանը օրենքով փոխելու անհրաժեշտությունը գտնում են ոչ նպատակահարմար, քանի որ այն իրենից ներկայացնում է բժշկական փաստաթուղթ, եւ չափորոշիչների փոփոխությունների դեպքում հնարավոր չէ արագ արձագանքել եւ կատարել անհրաժեշտ փոփոխությունները):
2. Մինչ համապատասխան օրենքի ընդունումը ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 410 հրամանում կատարել հետեւյալ փոփոխությունները

- Հստակեցնել հիվանդությունների ցանկում նշված հիվանդությունների սահմանումը՝ ըստ նրանց խանգարման աստիճանների
- Ամրագրել զորակոչիկին նրա առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական զննության եզրակացության մասին ակտի պարտադիր տրամադրումը՝ անկախ զորակոչիկի դիմումի առկայությանը
- Սահմանել զորակոչիկի մոտ մի քանի հիվանդությունների զուգակցմամբ զինծառայությանը նրա պիտանիության որոշման կարգը
- Զորակոչիկի առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական եզրակացության ակտում որպես պարտադիր պայման ներառել զինվորական ծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում նրա առողջական վիճակի հնարավոր զարգացումների

[10] http://hcav.am/wp-content/uploads/2014/10/M_2014-04.06_202-1.pdf



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

վերաբերյալ կանխատեսումների գրառումը եւ դրանց վատթարացումը կանխարգելող ցուցումները

3. Օրենսդրորեն սահմանել բժշկական ակտի բողոքարկման մեխանիզմը

4. Ապահովել զորակոչիկների եւ զինծառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ անկախ գանգատների առկայությունից

5. Հիվանդության հաստատման կամ ժխտման համար ապահովել անհրաժեշտ լրացուցիչ հետազոտության իրականացումը եւ որակոչիկների բուժզննության վերաբերյալ ախտորոշումը համապատասխանեցնել առողջության իրական վիճակին

6. Ապահովել սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողների ներգրավումը բացառող, կանխարգելող անկախ վերահսկողական մեխանիզմ:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

## ՀԱՎԵԼՎԱԾ

Ներկայացվում է մի քանի զորակոչիկների դեպքերի նկարագրությունները.

*Հիվանդության հաստատման կամ ժխտման համար չի իրականացվում անհրաժեշտ լրացուցիչ հետազոտություն, որը խիստ կարեւոր է պիտանիության հարցի որոշման համար:*

1. Զորակոչիկին տրվել է «Ամորձիների հիպոտրոֆիա՝ ֆունկցիայի արտահայտված խանգարմամբ» ախտորոշումը, որը ներառված է «Հիպոգոնադիզմ» հիվանդության մեջ: Չնայած այն հանգամանքին, որ զորակոչիկի մոտ առկա էր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը, զորակոչիկը 2014 թ-ի ձմեռային զորակոչի ժամանակ ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը, սակայն հրաժարվել է ներկայանալ զորակոչման եւ բազմաթիվ անգամ պահանջել վերափորձաքննություն: Միայն 2015 թ-ի ամառային զորակոչի ընթացքում կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշմամբ զորակոչիկը ազատվել է զինվորական ծառայությունից՝ հաշվառվելով պահեստազորում:

2. Զորակոչիկ Ե. Ա-ն ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը եւ նրան տրամադրվել է ծանուցում 2015 թ-ի հունվարի 8-ին զորակոչման մասին, չնայած այն հանգամանքին, որ քաղաքացին գանգատվել է սկոլիոզի առկայության հետեւանքով ողնաշարի գոտկակրծքային հատվածում ցավերից: Նա դժվարանում էր կանգնել երկար ժամանակ, չէր կարողանում կատարել ծանր աշխատանք: Ոսկրամկանային համակարգի խնդիրների կապակցությամբ հետազոտվել է ՎՕԳԿ-ում եւ նրա մոտ հայտնաբերվել է ողնաշարի գոտկակրծքային հատվածի սկոլիոզ I աստիճան, ծռվածության



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

անկյունը 11 աստիճան, հարթաթաթություն II աստիճան, կոնքի դեւիացիա դեպի աջ, ստորին վերջույթների երկարությունների միջեւ տարբերություն:

Բացի այդ, զորակոչիկի մոտ առկա էր թուլություն, ախորժակի անկման ու մարսողական խնդիրներ, որոնց կապակցությամբ հետազոտվել է Նորք ինֆեկցիոն հիվանդանոցում, որտեղ որեւէ հիվանդություն չի ախտորոշվել, սակայն նշված բոլոր գանգատները դեռեւս պահպանվել են: Ունեցել է ալերգիկ գանգատներ: Անտեսելով զորակոչիկի բոլոր գանգատները՝ վերջինիս առանց կրկնակի փորձաքննություն նշանակելու զորակոչել են ծառայության:

3. Զորակոչիկը ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը, չնայած այն հանգամանքին, որ նրա մոտ ախտորոշված թեթեւ նեւրասթենիայի (F48.0) հետեւանքով գանգատվել է հաճախակի գլխացավերից, սրտխառնոցից, փսխումից, քնի խանգարումներից, մտավոր աշխատանքի դյուրիհոգնելիությունից, հիշողության խանգարումներից: Սակայն, անհասկանալի էր «թեթեւ» որակումը այս դեպքում, քանի որ ՀՄԴ 10-ը «Նեւրասթենիա» հիվանդությունը չի դասակարգում ըստ ծանրության աստիճանների: Ինքնին նեւրասթենիան պատկանում է նեւրոտիկ հիվանդությունների շարքին, ուստի կարգավորվում է ՀՀ ՊՆ Թիվ 410-13 հրամանի 7-րդ հոդվածով: Հետեւաբար, զորակոչիկի պիտանելիության որոշումը պետք է իրականացվեր նշված հոդվածի համաձայն եւ զորակոչը պետք է իրականացվեր միայն բուժումից հետո: Այս դեպքում էր միայն հնարավոր եզրակացություն կազմել հիվանդության ընթացքի, ծանրության աստիճանի, կայունության, հնարավոր ելքի եւ դրանից բխող Ա, Բ, Գ, Դ կետերի համաձայն պիտանելիությունը:

Նեւրասթենիան որպես կանոն անբուժելի խնդիր է, իսկ բուժումը ներառում է վարքային խանգարումների համար հոգեթերապիա, ուղեկցող գանգատների՝ գլխացավերի, սրտխառնոցի, փսխման, զարկերակային ճնշման կարգավորման համար ֆարմակոթերապիա (դեղորայքային բուժում):



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Փաստորեն, առանց որեւէ բուժման ԿԲՀ-ն եզրակացրել է, որ զորակոչիկի մոտ առկա է «բուժմանը ենթարկվող և լավացումով ավարտվող թեթև և կարճատև արտահայտություններով հոգեկան խանգարումներ» եւ ՀՀ ՊՆ թիվ 410-13 7-րդ հոդվածի Գ կետի համաձայն զորակոչիկը ճանաչվել է զինվորական ծառայությանը պիտանի սամանափակումով:

Հ. Մ-ի մոտ առկա գլխացավերի համար նա պետք է հետազոտվեր նյարդաբանական բաժանմունքում, որտեղ անհրաժեշտ էր պարզել, թե ինչ բնույթի, ինչ ինտենսիվության ցավեր են, գլխի որ մասում են դրանք, ինչպես նաեւ կապը ֆիզիկական աշխատանքի հետ, արտաքին ֆիզիկական այլ գործոնների հետ, պետք է որոշել՝ առաջնային է (եթե այո, ապա տեսակը ըստ գլխացավերի միջազգային դասակարգման՝ լարվածության, կլաստերային, միգրենային, անոթային), թե՞ երկրորդային (ինչպիսի հիվանդության հետեւանք է եւ արդյոք ունի կապ նեւրասթենայի հետ): Վերոնշյալ քայլերը չեն ձեռնարկվել եւ բացի այդ, ՀՀ ՊՆ թիվ 410-13 հրամանը չի ներառում այն այլ ներառում է միայն միգրենը:

Զորակոչիկի մոտ առկա են եղել արյան համակարգի խանգարումներ՝ բազմաթիվ ցուցանիշներ նորմայից շեղված են եղել, որի պատճառը չի բացահայտվել բուժզննությամբ:

Հետեւաբար, զորակոչիկ Հ. Մ-ն հրաժարվել է ներկայանալ զորակոչման:

*<u>Բուժման նպատակով տարկետում ստանալու ժամանակահատվածում իրականում բուժում չի կատարվում կամ այն կրում է ձեւական բնույթ, իսկ արդեն հերթական զորակոչին ճանաչվում են պիտանի, չնայած նրանց առողջական վիճակի փոփոխություն տեղի չի ունեցել:</u>*

4. Զորակոչիկ Է. Ա-ն 2014 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում ճանաչվել է զինվորական ծառայությանը պիտանի, սակայն ունենալով բազմաթիվ առողջական խնդիրներ հրաժարվել է ներկայանալ զորակոչման: Զորակոչիկի



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

մոտ ախտորոշվել է խոցային հիվանդություն, տասներկումատնյա աղու խոց 0.6 սմ, խոցասպիական դեֆորմացիա՝ առանց մոտոր եւ էվակուատոր ֆունկցիաների խանգարման, որը մի քանի հետազոտության արդյունքում վերստին հաստատվել է: Շարունակական գանգատների պատճառով կրկին անցել է հետազոտում եւ ախտորոշվել խոցային հիվանդություն, տասներկումատնյա աղու կոճղեզի խոցեր 0.5 եւ 0.6 սմ, կոճղեզի չափավոր խոցասպիական դեֆորմացիա՝ առանց մոտոր եւ էվակուատոր ֆունկցիաների խանգարման, խրոնիկական խրոզիվ գաստրիտ, բուլբիտ, դիսբակտերիոզ: Այնուհետեւ ախտորոշվել է խոցային հիվանդություն, տասներկումատնյա աղու կոճղեզի համբուրվող խոցեր, խոցասպիական դեֆորմացիա՝ առանց մոտոր եւ էվակուատոր ֆունկցիաների խանգարման, մի քանի անգամ նրա մոտ հաստատվել են խոցերի առկայությունը եւ յուրաքանչյուր անգամ նրան տրվել է տարկետում բուժման նպատակով: Խոցերն ու էռոզիաները փաստված են նաեւ հետազոտման ժամանակ կատարված տեսանկարահանմամբ եւ լուսանկարներով: Սակայն, այդ ընթացքում որեւէ անգամ չի ստացել բուժում: Փոխարենը կատարվել է ստուգում և արվել են որոշ դեղորայքային նշանակումներ:

Վերոնշյալ հետազոտությունների ընթացքում տեղի են ունեցել մի շարք խախտումներ, մասնավորապես.

- Է. Ա-ն խոցային հիվանդությամբ տառապել է մոտ չորս տարի: Երեք անգամ տրամադրվել է տարկետում բուժման նպատակով, սակայն երեք անգամն էլ բուժումն արդյունավետ չի եղել, քանի որ երրորդ տարկետումից հետո հետազոտվել է եւ խոցային հիվանդությունը կրկին ախտորոշվել է (պահպանվել է),
- Ճանաչվել է պիտանի տասնօրյա բուժումից հետո: Սա փաստում է այն մասին, որ կատարվել է կողմնակալ կանխատեսում, քանի որ նախապես հնարավոր չէ որոշել հիվանդության ելքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ երեք տարիներին բուժումն **անարդյունավետ է** եղել,



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

- Չի կատարվել H.pylori որոշման թեստ, որը պարտադիր է բուժման սխեման ընտրելու համար: Հելիկոբակտերի առկայության դեպքում պետք է կատարել հակահելիկոբակտերային թերապիա,
- Չի պարզվել նաեւ խոցի բնույթը եւ պատճառը,
- Փաստացի բուժում չի կատարվել:

Տեղի է ունեցել ՊՆ N 410-13 հրամանի համապատասխան հոդվածի սխալ կիրառում: Քանի որ Է. Ա-ի խոցը քրոնիկ է եւ բուժմանը չի ենթարկվում, հետեւաբար կիրառելի է եղել համապատասխան հոդվածի այլ կետ, որը սահմանում է, որ զորակոչիկները պիտանի չեն՝ հանվելով զինվորական հաշվառումից, որը սակայն ակնհայտորեն չի կիրառվել հանձնաժողովի կողմից:

Այս ամենը հաշվի առնելով՝ զորակոչիկը հրաժարվել է 2015 թվականի հունվարի 24- ին ներկայանալ զորակոչման: Նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ: Այս ամբողջ ընթացքում զորակոչիկի առողջական վիճակը մնացել է նույնը, որեւէ բժշկական զննության չի ենթարկվել եւ չի ստացել որեւէ տեսակի բուժում:

Այնուհետեւ, 2015 թ-ի ամառային զորակոչի ընթացքում, Քանաքեռ Զեյթուն Բժշկական կենտրոնում կատարված էզոֆագոգաստրոդուոդենասկոպիայով ախտորոշվել է՝ «տասներկումատնյա աղու կոճղեզի խոց եւ էռոզիաներ: Ստամոքսի էռոզիաներ: Մակերեսային գաստրիտ, բուլբիտ:» Այսինքն՝ զորակոչիկի մոտ 01.06.2015 դրությամբ խոցայի հիվանդությունը, էռոզիաները եւ գաստրիտը պահպանվել են, խոցային հիվանությունը չի լավացել (խոցի չափսերը՝ 0.5 մմ), հետեւաբար եւս մեկ անգամ հաստատվում է որ ընթացքը քրոնիկ է (N 410-13 հրամանի 30 հոդվածի Ա կետի I այունակ): Ավելին, զորակոչիկին որեւէ դեղորայքային, վիրահատական կամ այլ տեսակի բուժում չի կատարվել, որը ՊՆ Հրամանի 30 հոդվածի խախտում է, եւ ՊՆ անգործության հետեւանքով զորակոչիկի առողջական վիճակն անընդհատ վատթարացել է:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Հատկանշական է եւ անհասկանալի, որ ընդամենը 1 օր հետո՝ 02.06.2015 թ-ին, նույն՝ Քանաքեռ Զեյթուն բժշկական կենտրոնում Է. Ա-ին որպես զորակոչիկ նպատակահարմար չեն գտել ենթարկել կրկնակի էնդոսկոպիկ հետազոտության եւ շարունակել հետազոտությունը՝ պատճառաբանելով, որ այդ կաբինետում ապարատը հագեցված չէ նկարահանող սարքով: Այսինքն՝ ակնհայտ է, որ բժիշկը հստակ հրահանգ է ստանում զորակոչիկների հետազոտման արդյունքում ներկայացնելու ոչ իրական պատկերը:

Արդյունքում, զորակոչիկը ազատվել է զինվորական ծառայությունից՝ հաշվառվելով պահեստազորում:

*Որոշված չէ հիվանդության խանգարման ծանրության աստիճանը:*

5. Զորակոչիկ Ա. Պ-ն թեեւ վերջնականապես ազատվել է զինվորական ծառայությունից, նրա բժշկական հետազոտությունները եւ եզրակացությունները իրականացվել են մի շարք թերություններով եւ բացթողումներով:
   - Հետագա բուժզննությունները իրականացվել են առանց նախորդող բուժման:
   - ՀՀ ՊՆ 410 հրամանով նախատեսված եւ բժշկական հետազոտմամբ հաստատած հիվանդության դեպքում, կիրառվել է համապատասխան հոդվածի սխալ կետ, որը ի տարբերություն համապատասխան կետի նախատեսում էր պիտանիություն զինվորական ծառայությանը:
   - Հայտնաբերված վահանագեղձի հիվանդության դեպքում չեն ստուգվել հորմոնների նկատմամբ հակամարմինները, որը պարտավոր են ստուգել:
   - Ախտորոշված հիպոգոնադիզմի առկայության պայմաններում չի որոշվել սպերմատոգենեզի խանգարման ծանրության աստիճանը:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

*Բժշկական փաստաթղթերում առկա են մի շարք հակասական ախտորոշումներ, որոնցից գերադասվում է զինվորական ծառայությանը պիտանի համարվելու համար հիմնավորող ախտորոշումը:*

6. Զորակոչիկ Կ. Ղ-ն եւ 2014 թ-ի, եւ 2015 թ-ի զորակոչերի ընթացքում ճանաչվել է զինվորական ծառայությանը պիտանի, թեեւ.
   - նրա մոտ ախտորոշված «մտավոր հետամնացություն» հիվանդության համար հրամանով սահմանված կարգով չի որոշվել ծանրության աստիճանը, որը հանդիսանում է վերափորձաքննության հիմք:
   - **հստակ ախտորոշված ակամա գիշերամիզություն, հազվադեպ էպիզոդներ հիվանդության պարագայում, երբ կա հստակ հաստատված դեպք,** ինչպես նախատեսում է ՀՀ ՊՆ 410 հրամանը, հիմք է ընդունվել նախկին ախտորոշումը, որը ենթադրում էր զինվորական ծառայությանը պիտանիություն:
   - Առկա վարիկոցելե երրորդ աստիճան ախտորոշմամբ, նույնիսկ եթե հիվանդը հրաժարվում է վիրահատությունից, զորակոչիկին պետք է տրամադրվեր **տարկետում մինչև մեկ տարի,** որը չի արվել:

   Այնուամենայնիվ, հաշվի առնելով նշյալ հանգամանքները զորակոչիկը հրաժարվել է ներկայանալ զորակոչման:

*Կիրառվում է զորակոչիկի առողջական վիճակին ՀՀ ՊՆ 410 հրամանի չհամապատասխանող կետ*

7. Զորակոչիկը 2015 թ-ին հետազոտվել է Մաշկաբանության հանրապետական կենտրոնում, որտեղ ախտորոշվել է «գլխի մազածածկ հատվածի փսորիազ, իրանի եւ վերջույթների վահանիկային փսորիազ»: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 05.06.2015 թ-ի եզրակացության հիման վրա զորակոչիկին տրամադրվել է տարկետում մեկ տարի ժամկետով բուժման համար, սակայն



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

զորակոչիկի մոտ ներառված է գլխի, իրանի եւ վերջույթների մաշկը, որը ենթադրում է, որ օջախը տարածուն է եւ անհրաժշտ էր կիրառել է 89-րդ հոդվածի ոչ թե Գ, այլ Բ կետը, եւ զորակոչիկը պետք է ճանաչվեր ժամանակավորապես ոչ պիտանի՝ ստանալով տարկետում 3 տարի ժամկետով: Խնդիրը վիճարկելուց հետո միայն զորակոչիկի վերաբերյալ որոշումը փոփոխվեց եւ նրան տրամադրվեց տարկետում 3 տարի ժամկետով՝ ճանաչվելով ժամանակավորապես ոչ պիտանի:

8. Զորակոչիկ Դ. Հ-ն թեեւ ազատվել է զինվորական ծառայությունից մեկ անգամ 3 տարով տարկետում ստանալուց հետո, նրա նկատմամբ կիրառվել էր համապատասխան հոդվածի սխալ, ոչ համարժեք կետ: Նրա մոտ հայտնաբերվել էր ողնաշարի կրծքային հատվածի կիֆոզ, Շոյերման Մառյի հիվանդություն, որի մեջ, ըստ ռենտգեն հետազոտության տվյալների ներառված է **երեք** ողն՝ Th6, Th8, Th9՝ մարմնի սեպաձեւ դեֆորմացիայով, իսկ այս պարագայում համաձայն ՀՀ ՊՆ թիվ 410 հրամանի 36-րդ հոդվածի համաձայն՝ պետք է կիրառվեր «Բ» կետը, այն է. ողնաշարի բնածին ու ձեռքբերովի վերջնական ծռվածությունները, արտահայտված օստեոխոնդրոպատիկ կիֆոզը, Շոյերման-Մառյի հիվանդությունը՝ համակցված տարածված սպոնդիլոարթրոզով (տարածված սպոնդիլոարթրոզ է կոչվում այն դեպքը, երբ պրոցեսում ներգրավված են 3 և ավելի ողներ): Զորակոչիկի մոտ առկա է եւ՛ ողնաշարի բնածին ու ձեռքբերովի վերջնական ծռվածությունները, եւ՛ Շոյերման-Մառյի հիվանդությունը՝ համակցված տարածված սպոնդիլոարթրոզով (**երեք** ողնի՝ Th6, Th8, Th9՝ մարմնի սեպաձեւ դեֆորմացիայով): Սակայն նրա նկատմամբ կիրառվել էր այլ կետ եւ նա ճանաչվել էր պիտանի զինվորական ծառայությանը: Որոշման վիճարկումից հետո միայն նա ազատվեց զինվորական ծառայությունից:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

*Պիտանիության հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է՝ հաշվի չառնելով զորակոչիկների գանգատները եւ առողջական խնդիրները, որն ըստ էության, հանդիսանում է առողջական վիճակը վատթարացնող ակտ:*

9. Զորակոչիկ Մ. Զ-ն՝ ունենալով մի շարք առողջական խնդիրներ, հրաժարվել է ներկայանալ զորակոչման, քանի որ նա չի ենթարկվել համալիր եւ մանրակրկիտ բժշկական հետազոտության: Նրա մոտ առկա հիվանդությունների վերաբերյալ եզրակացությունները հիմնականում թերի էին եւ ոչ ամբողջական, մասնավորապես.
   - չի որոշվել ախտորոշված պատանեկան կիֆոզի անկյունը, կիֆոզի աստիճանը, ֆունկցիայի խանգարման աստիճանը, որը հանդիսանում է կարեւոր հանգամանք զինվորական ծառայությանը նրա պիտանիության որոշման համար:
   - ախտորոշված կրծքավանդակի առաջնային պատի ռախիտիկ դեֆորմացիայի դեպքում, ըստ ՊՆ թիվ 410 հրամանի 36-րդ հոդվածի պահանջի, չի գնահատվել արտաքին շնչառական ֆունկցիան (ԱՇՖ): Ավելին, արտաքին շնչառական ֆունկցիան գնահատվել է նորմալ, որը ակնհայտորեն չի արտահայտում իրական վիճակը, քանի որ զորակոչիկը նշում է հեւոց, իսկ հեւոցը, ըստ ՊՆ թիվ 410 հրամանի աղյուսակ 3-ի, հանդիսանում է ԱՇՖ գնահատման չափանիշներից մեկը, եւ դրա առկայությունն արդեն չի կարող համարվել նորմալ: Բացի այդ, չի որոշվել ԱՇՖ գնահատման մյուս ցուցանիշները եւ ճիշտ չի գնահատվել ԱՇՖ խանգարման աստիճանը:
   - Ախտորոշված սրտի ռիթմի չափավոր խանգարումը, որը չի համապատասխանում Հիվանդությունների Միջազգային Դասակարգմանը, չի մասնավորեցվել ըստ սրտի ռիթմի խանգարումների առանձնահատկության, որը կարեւոր է զինվորական ծառայությանը զորակոչիկի պիտանիությունը որոշելու համար:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

- Զորակոչիկի մոտ առկա գլխացավերը ընդհանրապես հաշվի չեն առնվել զինվորական ծառայությանը զորակոչիկի պիտանիությունը որոշելիս, քանի որ այն ՊՆ թիվ 410 հրամանով եւս չի կարգավորվում:



59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am